

մօրն Սուլթանփաշէ, եւ եղբարց իւրոց սիրեցեալ եւ պատուեալ յաջս թագաւորաց Պարոն Մէլիք Աղէն, Պարոն Սուլթանումն, Պարոն Զաւլալն: Դարձեալ յիշեցէք ըզնօջայ Ֆռանգուլն եւ զկողակիցն իւր Բարէն: Եւ զղբատերքն իւր Շամսղամարն, եւ զորդիքն Մէլիք Աղին՝ Միքայէլն, Խաչիկն, Սիննան, Մէլիք Նիազն, եւ զորդի Սուլթանումին՝ Սաֆարն»:

Խօջայ Ֆռանգուլ կը յիշուի Խօջայ Խաչիկի Յայսմաւուրքին մէջ, 1604ին, Հին Զուղայ: Զենք գիտեր թէ երբ ամուսնացած է. կնոջ անունն է Բարէ: 1621ին, վերոյիշեալ թիւ 36 ձեռագրին համաձայն, Խօջայ Ֆռանգուլ ունէր Շամսղամար անունով դուստր մը: Իսկ թիւ 477ի Յիշատակարանին գրութեան ժամանակ (թուականն անյայտ), Շամսղամար չի յիշուիր, այլ «որդիքն Ֆռանգուլին, Բարայն ընդ Մէլիքնիազին, Մուսէս, Մուղամն ընդ Մարիամին»:

1972ին, նոյնպէս գտայ Խօջայ Ֆռանգուլի գերեզմանաքարը, երկաթագիր 15 տողոց արձանագրութեամբ, զոր հոս կ'արտագրեմ. «Տ(է)ր Ա(ստուա)ծ Հօր միածին Յ(իսու)ս Ք(րիստոս) որդի Կուսին, Տուր քաղութիւն Պարոն Խօջին Ա(ստուա)ծասէր Ֆռանգուլին, ՌԶԳ (1634) քվին սա փոխեցօ յաշխարհ վերին, փառօք յառնէ ցօրն վերջին ամէն»:

Ուրեմն, Խօջայ Ֆռանգուլ մեռած է 1634ին: Իր որդիներէն՝ Պարոն Բար կը մեռնի 1641ին. Մուսէս կամ Մովսէս՝ 1635ին, հազիւ եօթնամեայ. Մէլիքնիազ՝ նոյնպէս 1635ին:

1972ին գտայ ասոնց ալ տապանաքարերը, իրարու շատ մօտիկ, նոյն գերեզմանատան մէջ. ահա անոնց արտագրութիւնը.

«Այս է տապան եւ բնակարան խաչագատայ Պարոն Բարին, քվին ՌՂ (1641) յաւուր մեծի դատաստանին»:

«Այս է շիրիմ մանուկ Մովսէսին, որ ի քվին ՌԶԳ (1635) փոխեցաւ առ Տէր, եւ էր է (7) ամաց»:

«Այս է տապան մանուկ Մէլիքնիազին, որ քվ(ին)ն ՌԶԳ (1635) փոխեցաւ առ Ք(րիստո)ս, եւ էր ինքն ինն ամաց»:

Այս երկու մանուկները մեռած ըլլալու են, հաւանաբար, փոխանցիկ հիւանդութեան պատճառով:

1621ի Աւետարանի Յիշատակարանին համաձայն՝ Խօջայ Ֆռանգուլի կինը կը կոչուի Բարէ, ինչպէս տեսանք: Սակայն, 1972ին, Նոր Զուղայի գերեզմանատունը, իմ գտած տապանաքարի վրայ տարբեր անուն մը կայ.

«Եւ էր քվին հազար ամի ութսուն եւ հինգ քիւ աւելի (1636) հարշիկն վախջանի, կին էր սա Խօջայ Ֆռանգուլին, Որ էր տոհմաւ քաջագգի, տ(է)ր Ա(ստուա)ծ արա արժանի Միջնորդութ(եամ)ք ս(րբո)յ Կուսի, յաւուր մեծի դատ(ա)ստ(ան)ի»: